Եւ այսօր բովանդակ աշխարհի վրայ կը սաւառնի արդէն ոգեպնդիչ պատգամը այն Սիրտին սիրական· «Սրբազան Սիրտս մեծարողներուն պիտի բաշխեմ բոլոր շնորհները· իրենց ապահով ապաստանը պիտի ըլլամ կեանքի ընթացքին եւ մանաւանդ մահի պահուն· առատ օրհնութիւն պիտի ցոնեմ իրենց բոլոր ձեռնարկներուն վրայ· մեղաւորները իմ սիրտիս մէջ պիտի գտնեմ աղբիւր ու անհուն ովկեանը ողորմածութեան»: Եւ այդ մխիթարիչ պատգամը հասէր էր մինչեւ ափերը Նեղոսի, մինչեւ իմ ծննդավայրը: Եւ ես տարիներով քալեր էի Գահիրէի Մանախ փողոցէն, անցեր Գորտի Թեգու Սաքրամ եկեղեցիի առջեւէն, անտեղեակ այդ երեք բառերու ծագումին, անտեղեակ անոնց թաքուն ու քանդ իմաստին: Սակայն քանի որ Լոյսը գոյութիւն ունէր, անիկա տեսաւ նեղի պիտի ըլլար ամէնքին համար, ուշ կամ կանուխ: Եւ ես քանի՛ անգամներ, անոր առուերին ներքեւէն անցնելու պահուս, գեռ անտեղեակ Մարկրիթ-Մառիի անունին եւ պատմութեան, այսուհանդերձ քանի՛ քանի անգամներ, այո, ուրահեր եմ հրաժարիլ մեղանչումի ուղիներէն· եւ սակայն ամէն անգամին ալ՝ նարեկացիի բերնով՝ չեմ կրցեր ուխտիս սահմանին մէջ մնալ բոլորովին, կամ ամենեւին: Ես, ոչխար էջմիածնի եւ գաւառ առաջին Քրիստոնեայ ազգին: Ես, կարօտս՝ այդ ուղեցոյցին, Քրկիչին·

(Շար.ը 18րդ Էջ)

ՀԱՅԵՐԷՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ Բ. ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՎԵՐՋ ԳՏԱԾ Է ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Երեւանի մէջ աւարտած է հայերէնագիտական միջազգային Բ. գիտաժողովը, որուն մասնակցած են Խորհրդային Միութենէն եւ արտասահմանի կարգ մը երկիրներու հայագիտական կեդրոններէ մասնագէտներ, որոնց կարգին՝ է. Հէմմ, Ո. Շմասթինկ (Միացեալ Նահանգներ), Ճ. Պոլոնկի (Իտալիա), Կ. Շմիտ (Արեւմտեան Գերմանիա), է. Շրոց (Հնդկաստան), Ճ. Կրեմին (ԱՄՆ), Ճ. Վայտենգրէն (Հոլանտա), Ա. Տէրեան (ԱՄՆ), Գ. Ուլոնճեան (Իտալիա), Ռոպէր Տէր Մկրտեան (Ֆրանսա), Հ. Լեւոն Վրդ. Զէքիեան (Վենետիկ) եւայլն։

Երեք օրերու ընթացքին կարդացուած են աւելի քան 100 գեկուցումներ, հաղորդումներ՝ նուիրուած հայերէնագիտութեան տարբեր հարցերուն։ Գիտական ժողովի կազմակերպիչ կոմիտէի նախագահի տեղակալը՝ ակադ. Գէորգ Ջահուկեան, հետեւեալը։ ըսած է ժողովի արդիւնքներուն մասին.- «Մեր գիտաժողովը բաւականաչափ ներկայացուցչական էր, եւ ուրախալի է որ երեւանեան նախորդ գիտաժողովի համեմատութեամբ ընդգրկուեցան նոր երկիրներ, նոր վայրեր, նոր անձեր։ Այս գիտաժողովին մէջ ալ մեծ չափով արտացոլուեցան տեղեկութիւններ ընթացիկ համագործակցութիւներ։ Հին եւ միջին տերունդի ներկայացուցիչներու կողքին գիտաժողովին բարձր մակարդակի գեկոյցումներով մասնակցեցան երիտասարդ շատ մը գիտնականներ։ Ասիկա հաւատք կ'ընձեռէ բաւարար ապագայի նայելու հայերէնագիտութեան տեսակէտին։ Ժողովին իր արժանի տեղը պատրաստ յատուկ անուններու ուշադրութիւնները, որ նկատի առնուեցան հարցերու նոր լուծումներ»։

ԴՐԱՄԱՏԻԿ ԹԱՏՐՈՆԻ ՆՈՐ ՇՐՋԱՆԸ

Երեւանի դրամատիկ թատրոնի նոր շրջանը սկսած է ժողովրդական Ցաւերուն հանգրուանը» թատերախաղի ներկայացումով։ Թատերաշրջանի բացման առաջին օրը խումբը անակնկալ մը բերած է հանդիսատեսներուն համար։ Իւրաքանչիւր հանդիսականի բնծայուած է ծաղիկներ եւ շնորհաւորական բացիկներ։ Իսկ այդ օրուան առաջին հանդիսականին նուիրուած է թատերաշրջանի բոլոր բեմադրութիւններու մասին տոմս մը։ Խօսելով թատերախումբի յետագայ ծրագիրներուն մասին գլխաւոր բեմադրիչը՝ Արմէն Խանդիեան, նշած է թէ թատրոնը մտադիր է ներկայացնել կարգ մը բեմադրութիւններ, ինչպէս Պարոյր Սեւակի գործերու հիման վրայ ստեղծուած «Անվերջ վերադարձ» թատերախաղը, Յ. Պարոնեանի «Պաղտասար Ադրար»ը, Շէյքսփիրէն գործեր եւայլն։



Երեւանի Արաբկիր թաղամասի նորաստեղծ վրոսայգում կանգնեցուած «Վերածնունդի հուշակոթողը»

Հեղ. ՍԱՐԳՍԵԱՆԻ

ՍՊԱՆԻԱՅԻ ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԻԿՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Սպանիայէն նախկին ռազմիկներու պատմիրախումբ մը այցելած է Հայաստան։ Պատմիրախումբի մաս կը կազմէն Սպանիոյ նախկին ռազմիկներու եւ այլ գանազան կազմակերպութիւններու ղեկավարներ։ Երեւանի «Զրարթնոց» օդանաւակայանին մէջ հիւրերը դիմաւորած են եւ անոնց ուղեկցած պատերազմի եւ աշխատանքի հայկական հանրապետական խորհուրդի նախագահ գօրավար Ա. Ղազարեան, «Պատերազմի վետերաններու սոցիալական կոմիտէի երեւանեան տեղեկատուական կեդրոնի աշխատակիցներ։ Հիւրերը պիտի մնան Հայաստանի մէջ մինչեւ 30 սեպտեմբեր։

Հիւրերը այցելած են Երեւանի ցաղկահովիտի զբօսայգին՝ ուր ծաղիկներ դրած են Անծանօթ Զինուորի գերեզմանին։ Հոս՝ թանգարանին մէջ, տնօրէնը պատմած է հայկական ազգային գօրամասերու, յատկապէս 89-րդ Թամանեան գօրաբաժնի մարտական ուղիին մասին, որ յանգած է Պէռլինի գրաւման։ Զրոյցի մը ընթացքին Թոմաս Վիլտարա բռնած է.- «Մենք կարճ ժամանակուան մէջ շատ բան տեսանք Հայաստան։ Եղանք Մատենադարան, էջմիածին, Գառնի ու Գեղարդ, ուր ծանօթացանք հայ ժողովուրդի պատմական յուշարձաններուն։ Անհաւատալի է, որ Հայաստանի նման փոքր երկիր մը ունի այդպիսի հարուստ պատմութիւն, գարգացած ազգային մշակոյթ, որ անուշադիր չի թոյլ հայ ժողովուրդի աշխատասիրութեան մասին»։

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԲԱՅՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻԻՆ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԷՋ

Իր ծննդեան 79-րդ տարեդարձին օրը՝ կիրակի, Սեպտեմբեր 20, Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. ապրուած մեհականներու փոնջ մը ուսացած է ոչ թէ Վեհարանին մէջ, այլ Մայր Աթոռէն ոչ հեռու Մ. Աստուածածին եկեղեցին, ուր իր չթախտրուի գացած է նախագահելու նոր գանգակատան եւ վերանորոգուած եկեղեցւոյ բացման արարողութեան։ Եկեղեցւոյ մուտքին մօտ հաւաքուած ամբոխի ներկայութեամբ Վազգէն Ա. կարած է սիմնականաբար երեղոյ ժամերգը։ Արարողութեան ներկայ եղած է արժանթինահայ բարերարուհի Տորիս Զրնտգեան, որուն եւ իր հանգուցեալ ամուսնոյն՝ Վահէ Զրնտգեանի միջոցներով կառուցուած է եկեղեցւոյ նոր գանգակատունը եւ վերանորոգուած չէնքը։ Ի պատիւ բարերարներուն, անոնց անուններ փորագրուած են մուտքի պատին։ Պատմուրագած է Արժանթինի Հայոց Առաջնորդ՝ Գրիգորիս Եպիսկոպոս Բունիաթեան։ Յաւարտ արարողութեանց խօսք առնելով Ամենայն Հայոց Կաթողիկոս նշած է, թէ ներկայ ժամանակներ իշխանութիւններու րարեացակամ օգնութեամբ յատկ ի՛րնթանալ նաեւ եկեղեցականութեան գործ։ Ասոր վկայութիւններն են պատմաճարտարապետական - եկեղեցական կարգ մը յուշարձաններու վերակառուցումը Հայաստանի մէջ։ Արարողութեան մասնակցած են կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք Շնորհք Արք. Գալուստեան, Տիրան Արք. Ներսոյեան (Նիւ Եորքէն), Կեդր. Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ Մեսրոպ Եպիսկոպոս Գրիգորեան, թագմաթիւ ուխտաւորներ՝ Արժանթինէն, Միացեալ Նահանգներէ, Քանատայէն եւ Մերձաւոր Արեւելքի երկիրներէն։

ԺԱՖ-Ի ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ «ԱՐԱՔՍ» - «ՍԱՍՈՒՆ» ՊԱՐԱԽՈՒՄԲԸ ՀԱՆԴԻՍ ԵԿԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Ֆրանսահայ երիտասարդաց Միութեան (ԺԱՖ) Մարսէյլի մասնաճիւղի «Արաքս» - «Սասուն» համոյթը հանդէս եկած է Հայաստանի կարգ մը քաղաքներու մէջ։ Խումբին գեկավարը՝ Սիմոն Ագիպեան, այս առիթի նշած է.- «Այս օրերը, զուտ անցուցինք Հայաստանի մէջ, մեզի շատ ուրախութիւններ պատճառեցին։ Մենք մեր չնորհակալութիւնը կը յայտնենք Սիւրֆհայութեան հետ մշակութային կապի Կոմիտէին՝ խումբին այս հանդիսութիւնները մայր հայրենիքի մէջ ազատելու իր կազմակերպութեան համար։ Մենք չատ յուզուած էինք Երեւան, Լենինական, Կիրովական եւ այլ քաղաքներու ու գիւղերու մէջ ունեցած հանդիպումներու ժամանակ, ուր մեր երգերը սիրով կ'ընդունուէին։ «Արաքս» - «Սասուն» խումբը այս տարի պիտի նշէ իր գոյութեան երկրորդ տասնամեակը։ Դիւրին չէ օտար տիեզերքի երեսուն տարի պարատելը պահել։ Մեր խանդավառ ջանքերուն չնորհիւ, եւ նկատի ունենալ խումբին դեկավար Սոնա Կոկիւեանը, գուսան կնիկար Լեւոն Մինասեանը, նաեւ երեսուն Հարուրհազարն ու միութիւնը, մենք կը յաջողինք բեմաւորվն տարածել Հայկական պարը։ Աչքս չտ, խումբի գոյութեան մէջ մեզ կ'Վարուժան Պոպոճեանի նուիրական ջանքերը։ «Արաքս» - «Սասուն»ը Ֆրանսահայ գործիքի լուսպոյն խումբերէն է, որ Ա. մրցանակ չհած է ԺԱՖ-ի եօթը փառատօներուն։ Ուրախութեամբ կ'արձանագրենք, որ մեր պարտաւոյը եղած է ծանօթ արուեստագէտ Վահագն Խանամիրեան։ Անոր օգնութեամբ մենք տորմած ենք «Քոչարի»ն, «Շայախոս»ն, «Սասունցիներու պարը», «Ուզունդարա»ն, ազգագրական պարերու չարքը։ Իր գործը վերջին չրջանին չարունակած է Հայկական ժողովրդական երգ ու պարի պետական Համոյթի պարուհուհի Փայլակ Սարգիսեան, որուն ղեկավարութեամբ են «Մարտի Նոյա», «Կասաւ պարը», «Վարդանանց», «Վարդավառ» եւ այլ պարեր»։

ԴԵՂԻՆ ԱՆՁՐԵՒ ԵՐԵՒԱՆԻ ՎՐԱՅ

Անցեալ չարաթներու ընթացքին Երեւանի վրայ տեղի ունեցած տեղատարափ մը դիպինի ներկից դեռներու, ծառերու տերեւները, ինչպէս նաեւ տուներու պատուհանները։

Ջրօդերեւութաբանական եւ շրջանային քննիչ հանձնաժողովները ստուգած են, որ [illegible] Աղետի Հետեւանքով Չարաւ Ափրիկեան շրջանէն փչած հովերու բերած աւազներու հետեւանքն է պատահարը։

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Միջ. Մայր Սփիւռք Լիբանանը՝ մասամբ մը կ'ամայանայ, զանազան երկիրներ գաղթող, կարեւոր բիւրով հայկու մեկնումով (որոնց մէջ անհերքելիօրէն կան վաստակաւոր մտաւորականներ անշուշտ, այլ արժէքներու կարգին), Լիբանան կը մնայ ամայանալ Մայր Սփիւռք:

Իսկ անդին՝ հեռաւոր ափերու վրայ զանազան երկիրներէ եկող եւ ալիք առ ալիք հաստատուող եւ գործարարութիւններու մէջ տուայտող նոր սերունդներ իրենց ազգային հաւաքական ճակատագիրը ու ինքնութիւնը պահելու ի խնդիր, ի մի կուգան, կը հաւաքուին, կ'ինքնակամ փոփոխուին ու կը կազմակերպուին: Հիմնական նպատակը զոր կը հետապնդեն հետեւեալն է. նախ՝ դիմագրաւել նոր միջավայրի առընչուած դժուարութիւններն ու բարդութիւնները: Ապա՝ վերականգնել հայ կեանքը, դպրոցը, եկեղեցին, մշակոյթի կեդրոնները, մամուլ, մարմնամարզական վայրեր ու թատրոններ: Նոր Սփիւռքը, այս ձեռով իր զանակները զերծ կը կացուցանէ բազմաթիւ ախտերէ ու վտանգներէ: Արդարեւ՝ այսպէս գոյացած հայ առողջ հաւաքականութեան հաւատքին, նիւթական ու բարոյական օգնութեամբ է որ կը կառուցանուին հայ նոր դպրոցներ, եկեղեցիներ, մշակոյթի, գրականութեան, արուեստի ու երաժշտական զանազան կեդրոններ ու օճախներ, կը ստեղծուի անպայմանօրէն մամուլ, եւ կը հրատարակուին թերթեր ու գիրքեր, գաղութը մարմին, ձեւ եւ նշանակութիւն կ'առնէ:

Այդ խօսքերով կը վերածնին հայ կեանքն ու միջավայրը, կը վերահաստատուի ու կ'ամրապընդի ի հայը հայ պահելու եւ անոր մէջ Մայր Հայրենիքի հանդէպ աներկբայ եւ անդրդուելի սիրոյ ոգին զարգացնելու մեր հաւատքն ու հրամայականը:

Ինչ որ ալ ըլլան արգելքներն ու խոչընդոտները, այս համախմբումները գլխաւորաբար ծնունդ կ'առնեն Ռ.Ա.Կ.-ի ու Թ.Մ.Մ.-ի հայրենասիրական ու ազատասիրական իտէալներուն ու սկզբունքներուն (աներեւակայելի ու շօշափելի իրողութիւն է Հ.Բ.Ը. Միութեան տիտանական գործերն ու արդիւնաբեր գործունէութիւնը հայապահպանման բոլոր մարզերէն ներս, առանց բացառութեան, եւ մենք անվերապահօրէն կը սիրենք ու կը գործակցինք ազգանուէր այս հզօր հայ կազմակերպութեան հետ) շուրջ անոնց շուրջ՝ ու առաջնորդութեամբ:

Ինչ կը վերաբերի Աստրալահայ նոր գաղութին, անկազմակերպ ու ցիրուցան, եւ դեռ մօտիկ անցեալին գրեթէ անկարող՝ Հայոց Պատմութիւնը, Հայ Մշակոյթը, հայեցի բարքերն ու աւանդութիւնները ճեղինակութեամբ ծանօթացնելու եւ հայ սերունդներուն եւ օտար պետութիւններու, հազուագիւտ հայ գաղութներէն մին էր ան:

Այսօր՝ արդարօրէն կ'ընդունինք որ շնորհիւ մեր ազգայիններուն եւ անոնց մեր հաստատութիւններուն հետ շաղկապած ու համադրած աշխատանքներուն, ճիգերուն ու զոհողութիւններուն, ասպարագիսյ գաղութը սկսած է գրաւել արդէն ընկատելի տեղ մեր հայ իրականութենէն ներս, հետզհետէ ստանձնելով իրեն վիճակուած ազգային կարեւոր դերը:

Հոգեպարար գոհունակութեամբ կ'ըսենք նաեւ մեր մատղաշ սակայն խոստումնալից ու խոստումնալի Միութիւն ամսաթերթէն, աստրալահայութեան արձանագրած նորանոր նուաճումներն ու յառաջադիմութիւնը, հայապահպանումի նոր կռուան դառնալու գրաւականով: Ստոյգ է թէ նոր արիւնքներ եւ նոր ուժեր պիտի փթթին, աճին ու զարգանան, զանոնք երեսուն հանելու, գնահատելու, զարգացնելու եւ ծանօթացնելու նուիրական պարտականութիւնն է մեր ամսաթերթին:

Ազգային հաւաքական արժանապատուութիւնը բարձր պահելու եւ մեր հաւաքական ճակատագիրը բարելաւման ճամբուն մէջ դնելու ի խնդիր տարուելիք գործունէութեան կարեւոր մասն է այս գործը:

Աջ գծով՝ կարելի չէ չխօսիլ ու չ'անդրադառնալ «Միութիւն» ամսաթերթին մէկ տարիէ ի վեր տպած անխոնջ ու ժրաջան գործին ու ճամաճաուկ անոր որդեգրած վարքագծին, գործունէութեան ու արդիւնաբեր աշխատանքին: Ան՝ Յունիս 4-ին, մեծ շուքով տօնեց իր Ծննդեան առաջին տարեդարձը: Անոր գոյառումը՝ Աստրալահայ գաղութէն ներս անհրաժեշտ պայման մը, առեւելի՝ հրամայական մըն էր՝ հայ գարթօնքի ու ազգապահպանման լուրջ մտահոգութիւններով յուզուող ու գործող հայ զանգուածներու կողմէ: Որովհետեւ, Ռ.Ա.Կ.-ի բարձր տեսլականներով ու հայաշունչ ոգիով ներշնչուած այս թերթը կը համապատասխաներ իրենց հայրենասէր բոլոր մտածումներուն ու պահանջներուն:

Տեղին է մատնանշել որ թէեւ կարճ ժամանակամիջոցի մէջ, «Միութիւն»ը արդարացուցած է արդէն իր վրայ, Աստրալիոյ հայութեան կողմէ դրուած յոյսերն ու երազները: Անոր հայեցի անխառն շունչով բաբախող սիրտը՝ թարգմանն է բոլոր անոնց որոնք տոգորուած են մեր ազգային վեհ արժէքները, հայ մշակոյթը, գրականութիւնն ու արուեստը պահելու, զարգացնելու ու տարածելու իղձերով, ինչպէս նաեւ բոլոր անոնց որոնք կ'աշխատին նորաստեղծ, օտար վճռական հմայքներու, օտարապաշտութեան ու ... ենթակայ այս շրջապատին, բոլոր Աստրալիոյ տարածքին, հայ գաղութէն ներս կազմակերպել հայ կեանքը: Նոր սերունդներուն, մանաւանդ՝ պատանիներուն, անվերապահ եւ անսակարկ սէր ու գուրգուրանք, տալ անոնց Հայ Դատը պաշտպանելու ու շարունակելու կարողութիւն, պատրաստութիւն ու նոր եւ ազդու միջոցներ:

Կը մաղթենք որ այս ամսաթերթը աճի ու ուռճանայ եւ վերածուի օրաթերթի տարածելով մեր հոգիական իտէալներն ու մտածումները ոչ միայն Աստրալահայ սփիւռքի բոլոր խաւերուն ու զանգուածներուն, այ նաեւ՝ բոլոր սփիւռքներուն անխտիր: Բարօրութիւն ու յարատեւ կորով ազգանուէր զոհողութիւններուն, այ նաեւ՝ բոլոր սփիւռքներուն անխտիր: Բարօրութիւն ու յարատեւ կորով ազգանուէր զոհողութիւններուն, աշխատակիցներուն եւ համանանուն, անոր բարերար հեղինակներ իր խմբագրական կազմին

ՆԱԽԱԳԱՀ՝ ՏԻԱՐ Կ. ԴԱԼԼԱՔԵԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԽՕՍՔԸ, Թ.Մ. ՄԻՈՒԹԵԱՆ 40-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ՍԱՐՔՈՒԱԾ ԳՐԱԿԱՆ Ե ՐԵԿՈՅԹԻՆ՝

ՋՕՆՈՒԱԾ Ա. ՉՕՊԱՆԵԱՆ ՄԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ



Սեղանին շուրջ՝ կեդրոնը՝ Տիար Կարլէն Դալլաքեան օրուայ նախագահը, իր աջին Գերշ. Սրբազան հայրը, իսկ ձախին օրուայ ատենախօսը Տիար Գէորգ Սարաֆեան.

Ձերդ Սրբազնութիւն,
Հոգեւոր Հայրեր եւ
Յարգելի Ներկաներ

Նախ պիտի շնորհակալութիւնս յայտնեմ Թէքէյեան Մշակութային Միութեան այս ձեռնարկին համար, ինչպէս նաեւ բանախօս Գէորգ Սարաֆեանին, այստեղ հանդէս եկած բոլոր բարեկամներին, որոնք իրենց մասնակցութիւնը բերեցին, պատուելու Արշակ Ջօպանեանի յիշատակը:

Ես կ'ուզէի Ձեզ կարճ խօսքով, իմ որպէս այս գրքի հեղինակի ապրումները կամ տըպաւորութիւնները տալ, մի մարդու մասին որը իր գործունէութեամբ անկրկնելի է հայոց ամբողջ պատմութեան մէջ: Չիկայ մէկ ուրիշը որ կարելի է իր կողքը դնել:

Անշուշտ թէ ունեցել ենք բարձր գագաթներ արուեստի, գրականութեան մէջ, եւ ունինք. բայց որպէս կանոն իւրաքանչիւր գագաթ ունեցել ընդամէնը մէկ գլուխ, իր գործի գագաթն է եղել: Ջօպանեանը այս իմաստով բազմագագաթ էր եւ բոլոր այդ գագաթներին, վեհապանծօրէն ամենաբարձր կատարին էր նստում: Այսպէս էին Եւրոպական մշակոյթին մէջ վերածնունդի գործիչները: Եթէ յիշենք իւրաքանչիւրը բանաստեղծ էր, նկարիչ էր, երաժիշտ էր, հասարակական էր, բայց ո՛չ 20րդ դարի, ու 19րդ դարի, Ջօպանեանը եղաւ միայն մեր իրականութեան մէջ:

Մի հարց անհրաժեշտ էր պարզել եւ ես այդ հարցն էի անընդհատ հետապնդում այս աշխատութեան մէջ:

Ինչո՞վ բացատրել որ հէնց այդ ժամանակ, ծնուեց Ջօպանեանը: Պատահականութի՞ւն էր թէ հայ ժողովրդի կեանքի պատմութեան տրամաբանութիւնն էր պահանջում Ջօպանեան ու Ջօպանեանի նման մարդկանց ծնունդը:

Ես կարծում եմ թէ ճիշտ պատասխանը երկրորդն է: Հայ ժողովրդի կեանքի պատմական զարգացման տրամաբանութեամբ, այդ մի շրջան էր, երբ պէտք է անպատճառ հանդէս գային Ջօպանեան եւ Ջօպանեաններ ու եկան: Սկըսւեց Խաչատուր Աբովեանով եւ այս պիտի թուարկեմ, թերեւս շատ կը լինի շարքը, բայց իւրաքանչիւր մարզի մէջ մէկը եղաւ կամ մէկից աւելին, երաժշտութեան մէջ ունեցանք Կոմիտաս, ճարտարապետութեան մէջ բացայայտուեց Թորամանեանը, մեր ձեռագրերի, մանրանկարչութիւնը ամբողջովին պեղեց, Գարեգին Յովսէփեան, ապագայ Կաթողիկոսը Կիլիկիոյ, մենք ունեցանք վիթխարի գագաթներ, բանաստեղծութեան, գեղանըկարչութեան Մարտիրոս Սարեան, Յովհաննէս Թումանեան եւ ունեցանք Ջօպանեան:

Պատահական չէր, սա շարք էր ու տրամաբանութիւն էր: Ազգ էր ստեղծւում, մենք շատ յաճախ այս բառը օգտագործում ենք նկատի առնելով չորս հազար տարին բայց ճիշտ չէ, գիտականօրէն, մենք ազգ դարձանք վերջին հարիւր տարուան մէջ:

Ազգ էր ստեղծւում եւ ազգի ստեղծիչներ էին այս մարդիկ, Գարեգին Սրուանձտեանց մի ամբողջ էփոս հանեց մեր աչքի առաջ:

Գիտէ՞ք ինչ հերոսութիւն էր, էփոսը, Սասունցի Դաւիթը մեր ժողովուրդին տալը: Մարդ որ արժանի է մի այդպիսի արձանի ինչ որ Սասունցի Դաւիթը Երեւանի մէջ է: Իսկ Ջօպանեան. Ջօպանեանը մեզ տուեց Նարեկացին, բնաւ գաղափար չունէինք որ Նարեկացին մեծ բանաստեղծ էր, Ջօպանեանը տուեց Նարեկացի մեզ, Ջօպանեանը մեզ տըւեց Քուչակ եւ ամբողջ աշխարհին տուեց Քուչակ ու Նարեկացի, նոյնիսկ գաղափար չունէինք թէ ի՞նչ բան է Քուչակ:

Ֆրիկ, Կոնստանդին Երզընկացի, եւայլն, եւայլն. շատ կարող է թուարկել շուրջ տասնըհինգ անուն, եթէ ուրիշ որեւէ բան արած չը լինէր Ջօպանեանը, այլ միայն վեր հանեց այս ամէնը եւ տուեց մեզ, պիտի բաւարարէր, որպէսզի նրա անունը որպէս փառքի պսակ մեր ժողովուրդին:

Այդ դարաշրջանը, ասացի, շատ յատկանշական էր, որովհետեւ ճակատագրական դարաշրջան էր մեր ազգին համար, եւ Ջօպանեանը ունեցաւ խորութիւնը մտածումի, որպէսզի ճիշտ կերպով յանգէր քաղաքական կողմնորոշման կամ արեւելումի, եթէ կուզէք այս բառը:

Աբովեանը, առաջինը ասաց, ձեւակերպումի տեսքով, երբ մտաւ այդ մեր ժողովուրդի պատմութեան մէջ որպէս հիմնաքար, դնել յետագայ ուղին, ռուս ժողովուրդի հետ բարեկամութեան ուղին է, ուրիշ ճանապարհ չունինք:

Կրկնեցին յետոյ շատերը, զարգացնելով այդ միտքը, բայց արեւմտահայութեան մէջ առաջին փորձը 1878-ին Ռուսական զօրքի յաղթական, Թուրքիոյ դէմ ճակատամարտերի կամ մարտերի որպէս հետեւանք, առաջինը 1878-ի Պոլսոյ հայութիւնը դիմեց ռուս զօրութեան ու յետոյ պատահեց անսպասելին, հրաժարուեցին ամբողջովին այս կարեւոր հենարանից եւ Ջօպանեանը առաջիններից մէկն էր, որ վերադարձաւ մատնանըշելով վէրքը, իր բունի մէջ ու նաեւ դարմանը առաջարկելով:

Ռուսական կողմնորոշում, ռուսական արեւելում: Մինակ չէր արեւմտահայութեան մէջ Ջօպանեանը, իր հետն էր Զօհրապը, իր հետ էր Կոմիտասը, երբ Պոլիս գնաց: Ձեզ յայտնի Կոմիտասի հետեւեալ բառը «չիք փրկութիւն արտաքոյ Ռուսիոյ»: Այս նախադասութիւնը ասուել է ի պատասխան Ջօպանեանի գրած մի նամակի մէջ, Կոմիտասի ձեռամբ, նոյնը Զօհրապն էր գրում իրեն, մի նամակում թէ արդէն վաղուց մենք երկրում թէպէտ քիչ էինք բայց այդ գծի վրայ էինք կանգնած:

Սա խիստ կարեւոր է որովհետեւ Ջօպանեանի ամբողջ քաղաքական ապագայ գործունէութիւնը պիտի պարզի որ նա հաստատուն մնաց այս քաղաքական արեւելումին վըրայ, մինչեւ Ռուսաստանում, դարը յեղաշրջող խոշորագոյն յեղափոխութիւնը, իսկ անոր հետեւ, այդ յեղափոխութեամբ ստեղծուած նոր կարգերը, իսկ Հայաստանում Սովետական իշխանութիւն:

Ջօպանեանի նման բարեկամ, Սովետական Հայաստանը չի ունեցել: Ամենախոշոր ու ամենալաւ բարեկամն էր սփիւռքի մէջ, մարդ որ ամենադժւար շրջանում, երբ Սովետական իշխանութիւնը շատ թոյլ էր, իսկ արեւմուտքում ահաւոր հակաքրոպականտ էր տարւում եւ զանազան ձեւերով էին ներկայացնում Սովետական մարդկանց, սատանայի, կամ չորս ոտանոց կամ պոչերով եւայլն, եւ շատերը հաւատում էին, իսկ ճշմարտութիւնը ասելը հաւասար էր բանտի կամ հալածանքի առնուազն: Ջօպանեանը այս հերոսական դէմքերից մէկն էր որ անվարան կանգնեց Սովետական Հայաստանի իշխանութեան կողքին: Բնականաբար Սովետական Հայաստանի մէկ բարեկամը, դարձաւ թիւ մէկ հակառակորդ, հակառակորդ ճակատի համար: Եւ նըրանք հալածում էին շատ յաճախ, պատահեց նոյնիսկ մի դրուակ. պիտի ասեմ որ իր հերթական ձեռնարկումներին մէկի ժամանակ երբ Սովետական Հայաստանի մասին էր խօսում, դահլիճին մէջ երիտասարդները իրեն վար գցեցին ամպիոնից, ոտքերի տակ սկսուեցին հարուածել, ծեծել մի խօսքով եւ երգել «մեր Հայրենիքը»: Յաջորդ օրը Ապագայ թերթի մէջ Ջօպանեանը գրեց, թէ երիտասարդ մարդիկ, դուք մոլորուած էք, այդ երգի հեղինակը, Միքայէլ Նալպանտեանը որ հայոց մէջ առաջին ընկերվարականն էր եթէ լինէր դահլիճի մէջ պիտի ասէր «սուս կացէք» եւ ինքը որպէս առաջին ընկերվարական, իր տեղը, Միքայէլ Նալպանդեանի, այնտեղ է, Սովետական Հայաստանում, որի դէմ դուք սարքեցիք այդ ձեր ելոյթը:

Ջօպանեանը մեզ ներկայանում է առաջին հերթին որպէս հայ մշակոյթի տարածիչ: Արդէն ասացի, Նարեկացի, Քուչակ, Ֆրիկ, եւայլն: Պատկերացրէք որ դարեր շարունակ, Նարեկացին մեզ յայտնի էր որպէս սուրբ գիրք: Իսկ հայ ժողովուրդի մի վիթխարի մասը պարզապէս անգրաճանաչ էր: Եւ այս գիրքը ընդունում էր որպէս բուժիչ գիրք: Մենք Նարեկացիի վրայ ունեցել ենք շատ մեծ հաւատք, պաշտամունք եւ զարմանալի է որ ժողովուրդը, ինչ որ տարերային ձգտումով, անընդհատ դէպի Նարեկն էր գնացել: Առանց կարդալու ունեցել ենք այդ պաշտամունքը: Այդ էր պատճառը որ բազմաթիւ Նարեկներ են պահպանել: Թշնամին մեզ հետապնդում էր, հայ մարդը, հայ գեղջուկը, Նարեկն էր առաջին փրկում, իր զաւկի հետ մէկտեղ: Բայց մինչեւ 1895ը ո՛չ ոք չը գիտէր որ Նարեկը խոշոր բանաստեղծութիւն է որ հայ ազգը համաշխարհային քաղաքակըրթութեանը տուել է Նարեկացի, այսինքն ամենաբարձր կատարը:

Այդ շրջանը մեր նման կատար չկար Եւրոպայում, յետոյ էլ գրեթէ շատ քիչ կարելի

(Շար.ը 15րդ. էջ)

. Remises
. Sepelios
Traslados
CASA Rivera
CORALLO, CUFARO Y CIA.
Jubilados, pensionados, cónyuges y fliares. sin cargo
Av. Córdoba 4902
T.E.: 773-2800/772-3288

ՏԱՐԱԾԵՑԷՔ
«ՍԱՐՏԱՐԱՊԱՏ»
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ

ԱՆԴՐԱՆԻԿ ՉԷԼԷՊԵԱՆԻ
«ԶՕՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ
ԵՒ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ»
Խորագրեալ կոթողական աշխատասիրութեան
(764 էջ, 100է աւելի նկարներ, մատենագիտութիւն՝ 270 աղբիւրներու)
ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ ՀԵՂԻՆԱԿԻՆ
ANTRANIG CHALABIAN
17264 Melrose
Southfield, Michigan 48075
U.S.A.

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 1



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

1– Կեսարիայէն մինչեւ Ա-ղիրիկները հասած է – կարճ ատ: 2– Մամուխ – մաղձ: 3– Հայկական ամիս մը – մշուշ – Քրօջմինը եւ Թէ... ներքինը կ'ըլլայ: 4– Աչք – տենչ – վաթ-ռունըմէկ: 5– Թարմ ըլլալը ալքին վայրէն կը հասկցուի – չատ անգամ լահմաճունին կ'ընկերանայ: 6– Տիգմ – բուրդի սիրահար: 7– Առաջ – ղրջազիծ: 8– Երկիւղ – լաց ու կոծ – խաղ մը: 9– Մէջը լեց-ւած պանիրը չատ համով կ'ըլ-լայ – պտուղ մը – անդունդ: 10– Սպաս – հով: 11– Վերջին երդը իր գլուխ – գործոցը կ'ըլլայ – առնուազն քսանըմէկ օր պէտք է ունենայ:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1– Երես տալու ըլլաս այս ալ կ'ուզէ – չատ մարդ չի վերցը-ներ: 2– Մախաղ – անմիջա-պէս: 3– Ո՞ր տեղն է – ընծայ – չատ անգամ պզտիկներուն հեքեաթները այս բառով կը սկսի: 4– Քառասունը չորս – թաւուտ – դերանուն մը: 5– Գաւիթ – իր զօրութիւնը մեծ է: 6– Հաւ – կեր: 7– Կտաւ – վարս: 8– Ելլել բայէն – բանա-կումի անպակաս գործիք – ա-ծական մը: 9– Վարչութիւն – երկու եղբօր հարսները – գը-ճուճ: 10– Երբեմն քիթէն ալ կանցուի... – իգական անուն մը: 11– Գեղարդ – ասոր կար-միրը օգնութիւն կը բաշխէ:

ՏԻԱՐ ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԿԸ ԴԻՄԷ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊԻՆ...

(Շար. 9-րդ Էջէն)

մարաններ եւ այս շրջանի մասնագէտ ուսուցիչներ կրնան իրենց մասնակ-ցութիւնը բերել այս աշխա-տանքին, այն ձեւով որ նկա-տի պիտի առնուի կրնայ:

Այս կերպով գոյութեան կոչուող պաշտօնաթուղթ մը պիտի վերահաստատէր Եկե-ղեցւոյ կողմէ ճանաչումը Հա-յոց Ցեղասպանութեան եւ խորհրդանիշ մը պիտի հան-դիսանար հայ ազգին ընծայ-ւած թիկունքին. ազգ մը՝ որ տարագրուած է իր նախնեաց հողերէն եւ ցրուած է աշխար-հի վնց ցամաքամասերուն վր-րայ:

Նորին Վեհափառութիւն, օգնեցէ՛ք մեզի որպէսզի կարո-ղանանք մեր ես ներել, այն-պէս ինչպէս Դուք ներեցիք Ձեզ ահաբեկող թուրքին:

Խորունկ յարգանօք՝

ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՏԻԱՐ ԿԱՐԼԷՆ ԴԱԼԼԱՔԵԱՆԻ ԽՕՍՔԸ...

(Շար. 14-րդ Էջէն)

է հաշուել որ իր կողքը դնենք:

Այո Տաճիք, բայց չորս դար յետոյ միայն, չորս դար յե-տոյ: Միայն չորս դար յետոյ աքանչելի գործ որ արեց եւ դուք տեսէք թէ ի՞նչ մեծ բա-նաստեղծութիւն է այնտեղ: Ովկիանոս: Այվազովսկին մի նկար ունի կոչուած է ինն-երորդ ալիք, ալիքների անընդ-հատ կուտակումը եզրահան-գում է իններորդ հարուածով որով ամէն ինչ վերջնուած, ապրերքը յաղթանակած է: Ահա Այվազովսքոս միտքը, բայց նոյնիսկ տարերքի մէջ, ինքը մարդկային կերպարը դնում, որը պայքարում է մինչեւ վերջ: Իններորդ ալի-քի միտքը այն է որ մարդը կա-րող է յաղթել նաեւ այս: Ի՞նչ իններորդ ալիք, Նարեկացու մէջ իններսուն, ինչհարիւր ու Ութ հատուած թէ նորից պիտի լսրունկուի այս ամբողջ հնգամեայ բանաստեղծական տա-ղերքը:

Ահա թէ ի՞նչ է Նարեկացի մեզ համար իսկ այդ բանից անառեղական էինք:

Ու Զօպանեանը մեր առջեւ բացեց այս գանձարանը, ըն-դամէնը լինելով 22 տարեկան, ինքը Զօպանեանը լինելով 22 տարեկան:

Անշուշտ թէ դարմանք պա-տճառ ամբողջ մտաւորական-ներ: Գիտեր այն ժամանակ ունէր բարձրագոյն մտաւոր-բանական: Ութսուններ-կանները Պոլսի ամենայուղա-փոխական տարրն էին, որոնք արմատական դաստիարակու-թիւն էին տալիս ժողովրդին, ամբողջ կազմակերպիչները նոր ազգի ստեղծիչներն էին, դրանցից մէկն էր ինքը Զօ-պանեանը: Արփիար Արփիար-եանը ունէինք, խոշորագոյն դէմքերից մէկը մեր հասարա-կական մտքի գրականութեան մասնաւորաբար եւ Արփիար-եանի նման վիթխարի հսկան կրցաւ ընկալել թէ այս ի՞նչ է արել Զօպանեանը ինչ որ մա-գադաճիների մամրակալած է-ջերից հերթական, ուրեմն ինչպէս ինչն էր ասում, թեր-թեր է հանել, որպէսզի ժողո-վրդին բրօթականտի եւ չեղի ժողովրդի ուշադրութիւնը. իսկ այդ ժամանակ չատ հարց-ը գործնական էր դրուած, հակաթրքական, ուրեմն թրք-քական լծից ազատագրուելու ձեւերը, մէթոտներ էին մշակ-ւում եւ պատրաստւում: Իբր Զօպանեանը չեղում էր ժողո-վրդի ուշադրութիւնը, նոյն-պէս ուրիշ գնահատուից Զօ-պանեանի հերոսական այդ քայլը: Բայց պարզուեց որ Զօպանեանը հենց, նոյն իսկ այդ անմիջական նպատակի տեսակէտով, չատ աւելի մեծ գործ էր կատարում քան այդ ամբողջ խումբը, երբ նա տալիս էր Նարեկացի իսկ յետոյ Քուե-չակ, այսինքն տալիս էր ժո-ղովրդի իր հպարտութեան իսկական առարկան:

Մենք չունեինք հպարտու-թեան մեր առարկաները, իսկ ազգային հպարտութիւնը, խո-շորագոյն կազմակերպիչ ուժ է մինչեւ այսօր, մենք պիտի կարողանանք, ճիշտ տալ մեր երիտասարդութեան մեր ազ-գային հպարտութեան առար-կաները, ո՛չ թէ կեղծ ձեւով, թէ մենք ենք աշխարհի պորտը եւ մեզնից աւելին ո՛չ ոք չկայ, ոչ սա վնաս է, ազգասպանու-թիւն է: Այլ իրականը տանի: Իրական մեր մեծութիւնները տանի: Ահա Զօպանեանը տա-լիս էր այդ ժամանակ այս ի-րական մեծութիւնները, ժո-ղովրդի ամփոփման, ժողո-վրդի մէկտեղման լաւագոյն ձեւերից մէկն էր, այն ինչ ա-նում էր Զօպանեանը, այս մե-ծերը մէջտեղ բերելով:

Զօպանեանին մենք կարող ենք այսօր գնահատել նաեւ իր անմիջական գրական գործու-նէութեան, թէ՛ բանաստեղծ, թէ՛ թատերագիր, թէ արձակով իր եւ զարմանալի է երբ հիմա ընդհանուր մի հայեացք ենք նետում նրա այս գործունէու-թեան վրայ, պիտի դուք տես-նէք որ Զօպանեանը իր տեսու-թեան մէջ, չատ յաճախ ասում էր թէ գրականութիւնը պիտի չը խառնուի կեանքի հասա-րակական երեւոյթներին, այլ թռչունի նման, ինչպես ինքը երգում է գայլայլո՛ւմ, բնաւ նկատի չունի, թէ մարդը գնայ-լուում է իրենով, իր համար է անում այս գործը: Դա սրտին մարդուն գործն է, թէ գայլայլի կամ ոչ:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ 1

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Հ.Բ.Ը. Միութեան Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Նազար Նազարեան, ինչպես ամէն տարի, այս տարի եւս ՍԱՐ-ՏԱՐԱՊԱՏ-ին կը նուիրէ 500 տոլար ի գնահատութիւն թերթիս ազգանուէր բովանդակութեան, անհերքելի ծառայութիւններուն՝ ազգապահպանման ու ազատասիրութեան բարձր սկզբունքնե-րուն, ինչպէս նաեւ Հ.Բ.Ը. Միութեան նկատմամբ որդեգրած իր դրական ու պատուաբեր կեցուածքին:

Տիար Ն. Նազարեան, Պէյրութահայ, կը պատկանի այն նուի-րական ընտանիքին որուն անունով Պէյրութի մէջ գոյութիւն ու-նեցող երկրորդական (եւ արհեստավարժական) վարժարանը կը համարուի մայր գաղութի ամենանկարեոր հայ կրթական կեդրոն-ներէն:

ԹԷՔԷԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

- 1929 - - 1987 -

ԿՈՄԻՏԱՍ ԵՐԳԱՉԱԽՈՒՄԲ

Հայց. Առաքելական Եկեղեցւոյ

Հոգաբարձութիւն

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Հովանաւորութեամբ՝

Գերշ. Գրիգորիս Եպս. Բուլհաթեանի

«ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ ԵՐԳԻՆ ՄԷՋ»

Սիրահոժար մասնակցութեամբ՝

Ֆելիսա Գույումճեանի, Սիրան Զորեանի, Նազարէթ Թեքերեանի, Ապրահամ Պուչաքճեանի

Դաշնամուր՝ **Պերճուհի Թոքատլեան-Դարբինեան**

Ընդհանուր Ղեկավարութիւն

ՄԱՔՐՈՒՀԻ ԷՕԼՄԷՍԷՔԵԱՆ

Ուրբաթ 23 Հոկտեմբեր Ժամը 20,45-ին

«Արմենիա» Լսարան ԱՐՄԵՆԻԱ 1866

Madagh en la Escuela Bakchellian

Se servirá finalizada la misa, el próximo

Domingo 8 de Noviembre, a las 12 horas,

en la sala de la Institución.

Corrales 2527 - Capital

ESTUDIO JURIDICO
Dr. Bautista Kuyumdjian
Dr. Gabriel E. Williams
Dra. Patricia Kuyumdjian de Williams
Dr. Javier B. Kuyumdjian
TUCUMAN 1438. PISO 7°
T.E.: 40-6809 / 7112 / 49-7049

Reestructuración de todos...

(viene de pág. 2)

de Vartkés Bedrosian, hoy estaríamos libres de tantos enfrentamientos sin sentido".

Al final del plenario hizo uso de la palabra el Presidente de la Unión de Escritores, Vartkes Bedrossian, cuyo último libro "Túnica de Fuego" dió lugar a muchas discusiones y opiniones, tanto a favor como en contra.

También él se refirió a la obligación de revalorizar el trabajo y el modo de pensar propio y, también, considera un extremismo calificar de síntoma algunas aisladas exteriorizaciones de **"Nacionalismo"**.

Manifiesta su deseo de que los esfuerzos para adoptar un "nuevo modo de pensar abarque también el ámbito de la diáspora. La inmensa mayoría de los trabajadores, los intelectuales, las organizaciones sociales y nacionales de la diáspora armenia manifiesta una verdadera y realista actitud patriótica con respecto a la Madre Patria", dice V. Bedrossian.

Efectivamente, la diáspora mantiene una actitud realista, verdadera hacia su patria, y no podía ser de otro modo en un mundo donde cada día se siente más y más la orfandad del privado de su tierra. Y esta posición no tiene relación alguna con el **"nuevo modo de pensar"** de allá, ni con la **"amplia apertura de las puertas"** ante las obras y los nombres de los armenios de la diáspora que fueron **"ignorados"**. La **"inmensa mayoría"** de la diáspora jamás esperó nada a cambio de su **"verdadera y realista"** actitud de patriota. Se ha regocijado con los éxitos de la Patria y se ha sentido deprimida con sus fracasos. Nada ha cambiado hasta hoy.

El armenio de la diáspora sigue atentamente el desarrollo de esta nueva etapa de la vida social, deseando, esperando que **"sepamos sacar el máximo provecho de las grandes posibilidades que se nos brindan en la actualidad"**.

A.T.

Araxi Marangozian de Hovivian

su fallecimiento

El 29 de setiembre pasado se produjo en esta capital el fallecimiento de la Señora Araxi Marangozian de Hovivian, benefactora de la Ugab y persona muy respetada dentro de la comunidad armenia.

Sus restos recibieron sepultura en el Cementerio Armenio de Villegas, oportunidad en que se realizaron los oficios religiosos a cargo de los sacerdotes Vazken Stepanian y Mateos Kouyoumdjian.

Expresamos nuestras condolencias a su hermana Anahid Marangozian.

IMPORTANTE EMPRESA TEXTIL NECESITA

Encargado para su sección expedición

Con reconocida experiencia.

Lugar de trabajo San Martín. Pcia. de Buenos Aires.

ELECTRICISTAS

Con experiencia en Montajes Industriales y amplios conocimientos en corriente continua y alterna.

Lugar de trabajo: San Martín, Pcia. de Buenos Aires.

SERENOS Y PORTEROS

Con probada experiencia en puestos similares.

Lugar de trabajo San Martín. Pcia. de Buenos Aires.

Los postulantes deberán escribir detallando antecedentes laborales y pretenciones a: GERENCIA DE PERSONAL

CASILLA DE CORREO Nº 14 VILLA MARTELLI - VICENTE LOPEZ - Pcia. de Bs. As.



COCINA

Budin de Pasas y Nueces

Ingredientes.

1/2 kg. de harina leudante o harina común con 5 cucharaditas de polvo de hornear.
250 gramos de manteca
250 grs. de azúcar
7 huevos; claras batidas a nieve
250 grs. de nueces picadas
250 grs. de pasas de uva sin semilla
2 1/2 copitas de cognac
2 1/2 cucharaditas de esencia de vainilla.

Preparación.

Batir la manteca y el azúcar hasta que la mezcla esté muy cremosa; agregarle las yemas y seguir batiendo; agregarle el cognac, la esencia de vainilla y, poco a poco, la harina cernida y las frutas; por último, las claras batidas a nieve.

Mezclar suavemente. Colocar en un molde enmantecado y cocinar a horno moderado durante 60 minutos.

Razmuhí Khurlopian

Deportivas.

Armenio empató otra vez

Instituto 0 - Armenio 0

Nuevamente la paridad fue el resultado para Armenio. Esta vez fue en Córdoba, con Instituto, un equipo que pretendió lograr su primer triunfo desde que comenzó el Campeonato, pero que se encontró ante un Armenio que, aunque visitante, estaba dispuesto a impedírselo.

Pese al fervor puesto por Instituto para arrollar a Armednio, fueron escasos los momentos de gol que debió enfrentar Sarmiento, sólo exigido por el disparo que, fuera del área, dirigio Gaspari contra su arco.

Armenio, replegado en campo, sólo intentó contraataques débiles y esporádicos pero, pese a no dominar el juego, consiguió algún rendimiento de su estrategia defensiva, y en más de una oportunidad puso en peligro la valla de Instituto, poniendo en peligro por dos veces a Alvarez con el peligroso remate de Bufarini y, luego, el tiro libre ejecutado por Oviedo.

Hubo aceleración y descontrol en el juego de Instituto que pujó por doblegar a Sarmiento y llevarse el triunfo, lo que no pudo ser. Armenio, por su parte, se limitó a hacer su juego y tratar de por lo menos conservar, hasta el último minuto, que no se abriera el marcador, por lo menos en su contra. Lo logró. Y el resultado marcó una paridad de fuerzas. Una paridad que le viene bien a Armenio, porque va templando a sus hombres en juego de primera y marcha decidido a mantener su posición dentro de la división.

Sigamos junto a Armenio, alentándolo en su propósito, y nos dará satisfacciones.

Dr. Arturo Balassanian

Escribano

Florida 716 - 2º Piso - Of. "K"

T.E.: 392-2768

Radio Llamada: 311-0056 - 312-6383

CODIGO 3136

EL PROFESIONAL LOS RECETA BARTAMIAN LOS DISEÑA SU HIJO LOS PREFIERE LINEA PIE/RECTOR DE ORTOPEDIA BARTAMIAN



ARTICULOS DE ORTOPEDIA EN GENERAL

Descuentos desde el **30%** a Obras Sociales.
Consulte con su Obra Social sobre otros beneficios.

ORTOPEDIA Bartamian

Av. Belgrano 1699 Tel. 45-5213 Bs. As.
Av. 7 Nº 1134 Tel. 3-4935 La Plata

Periódico Armenio "SARDARABAD" de la ASOCIACION CULTURAL TEKEYAN

Redacción y Administración
Cnel. Niceto Vega 4779
1414 - CAPITAL FEDERAL
T.E.: 771-2520
Horario de atención: *Lun. a de 10.00 a 19.00 hs.*

Registro Nac. de la Propiedad Intelectual Nº 78.836
Director
MIHRAN SARAFIAN
Corresponsalía, receptori avisos y suscripciones en
BRASIL
Sr. Hrair Chahinian
Av. Coxingui 191 Ap. 84
Cep. 00579 - San Pablo
T.E.: 813-6731

URUGUAY
Dr. Pedro Tanielian
Benito Blanco 675 Ap. 201
T.E.: 70-3114 Montevideo